ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

1969 թ. հունվարի 13—27-ը Հունգարիայում էր գտնվում ՀՍՍՀ ԳԱ գիտնականների մի խումբ, որի կազմի մեջ էին՝ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ս. Պ. Աղայանը, ակադեմիկոս Ա. Լ. Մնջոյանը, պատմական գիտությունների դոկտոր Ե. Ղ. Սարգսյանը և պատմական գիտությունների թեկնածու Վ. Կ. Ոսկանյանը։

Հայ գիտնականները եղան Հունգարական ակադեմիայի մի շարք գիտական հիմնարկներում, ծանոթացան նրանց գիտահետազոտական աշխատանքներին, ինչպես նաև հասարակական գիտությունների բնագավառում կոնկրետ համագործակցություն հաստատելու նպատակով այդ հիմնարկների ղեկավարների հետ քննարկեցին գիտական հարցեր։

Միմյանց հետ ունեցած հանդիպումներից, զրույցներից հետո Հունգար և Հայ գիտնականները համաձայնության եկան գիտական համագործակցություն հաստատելու մասին։ Երկու ակադեմիաների միջև գիտական համագործակցության վերաբերյալ կազմվեց արձանագրություն, որը ստորագրեցին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կողմից՝ ակադեմիկոս Ս. Պ. Աղայանը, Հունգարական ակադեմիայի կողմից՝ ակադեմիկ Լասլո Մատրային։

Արձանագրության համաձայն հետազոտություններ են կատարվելու հետևյալ պրոբլեմների գծով.

Պատմական գիտությունների բնագավառում՝

1. Հայկական աղբյուրները Հունգար ժողովրդի և նրա հետ շփվող ժողովուրդների V—XI դդ. նախապատմության մասին։

2. Հունգարական աղբյուրները հայերի մասին։

3. Հայ-Հունգարական կապերի պատմության մասին հոդվածների ժողովածուի հրատարակության նախապատրաստություն։

4. Հունգարիայում գտնվող հայկական փաստաթղթերի հրատարակման նախապատրաստություն։

5. Հայերի մասնակցությունը Հունգարիայի տնտեսական-քաղաքական կյանքին՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացման ժամանակաշրջանում։

6. Հունգար և հայ ժողովուրդների պայքարը թուրքերի դեմ (փաստաթղթերի ժողովածու)։

7. Հունգարիայի 1848—1849 թվականների ազգային-ազատագրական շարժումների արձագանքները հայկական պարբերական մամուլում։

8. Հունգարացիների մասնակցությունը Անդրկովկասի հեղափոխական շարժումներին և հայերի մասնակցությունը Հունգարիայի հեղափոխական շարժումներին։

9. Հունգարիայի և Հայաստանի տնտեսական և կուլտուրական կապերը արդի ժամանակաշրջանում։

Հնագիտության և ազգագրության բնագավառում՝ *գիտական աշխատողների փոխանակում կատարել Հայաստանում և Հունգարիայում անտիկ ժամանակաշրջանի պեղումներին մասնակցելու համար։ Ինչպես նաև ֆեոդալական ժամանակաշրջանի ազգագրական ուսումնասիրություններ կատարելու համար։*

Արվեստի պատմության բնագավառում՝ *հետազոտել Հունգարիայի ճարտարապետական հուշարձանները երկու ժողովուրդների կիրառական արվեստում եղած կապերն ու փոխազդեցությունները հայտաբերելու համար։*

Գրականագիտության բնագավառում՝ *ուսումնասիրել Հունգարիայի քաղաքական ու կուլտուրական կյանքի արտացոլումը Հունգարիայում հրատարակված «Արմենիա» ամսագրի էջերում։*

Լեզվաբանության բնագավառում՝ *փորձի փոխանակման նպատակով ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտից գիտաշխատող գործուղել Հունգարական էքսպերիմենտալ հնչունաբանական լաբորատորիա։ Կոորդինացնել զիլաղերեն լեզվով (հայատառ) տեքստերի հավաքման աշխատանքները։*

Իրավագիտության գծով՝ փորձի փոխանակման կարգով ուսումնասիրել Հունգարիայի և Հայաստանի տեղական իշխանությունների՝ սովետների աշխատանքները։

*

Փետրվարի 16-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի ընդլայնված նիստը, որը քննարկեց Հունգարիա գործուղված ՀՍՍՀ ԳԱ գիտնականների հաշվետվությունը՝ հունգարական ակադեմիայի հետ վարած բանակցությունների վերաբերյալ։ Զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ե. Պ. Աղայանը։

— Հայկական ակադեմիան առաջինն է Միության մեջ,— ասաց զեկուցողը,— որ անմիջական կապերի մեջ է մտնում արտասահմանյան ակադեմիայի հետ։ Արձանագրության համաձայն, որն ստորագրվել է 1968 թ. ապրիլին Բուդապեշտում՝ ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանի և հունգարական ակադեմիայի պրեզիդենտ Իշտվան Ռուսնյակի կողմից, տեղի են ունենում գիտաշխատողների փոխադարձ գործուղումներ՝ Բուդապեշտ և Երևան։ Նախատեսվում է նաև ասպիրանտների փոխանակում։ Երկու ակադեմիաների միջև գիտական համագործակցությունը առաջին շրջանում պետք է իրականացվի աստղագիտության, ֆիզիկայի, բիոքիմիայի և հասարակական գիտությունների գծով։

Այնուհետև Ե. Պ. Աղայանը իր զեկուցման մեջ հանգամանորեն կանգ առավ հունգարական ակադեմիայի բաժանմունքների ու գիտահետազոտական հիմնարկների կառուցվածքի, աշխատանքի մեթոդների ու ձևերի, գիտահետազոտական աշխատանքների թեմատիկայի և բազմաթիվ այլ հարցերի վրա։ Անդրադառնալով հունգարացի գիտնականների աշխատանքի մեթոդին, զեկուցողն ընդգծեց, որ նրանք աչքի են ընկնում գիտական աշխատանքի բարձր կուլտուրայով և ճշտապահությամբ։ Ոչ միայն բնական, այլև հասարակական գիտությունների ինստիտուտները հագեցված են նորագույն սարքավորումներով, ստեղծված են դրական ֆոնդերից և գիտական ինֆորմացիայից օգտվելու նորմալ պայմաններ։ Օրինակ, տնտեսագիտության ինստիտուտում գիտական աշխատողներին ամեն օր տրվում են ոչ միայն նոր գրքերի, այլև տարբեր լեզուներով լույս տեսնող տնտեսագիտական ամսագրերում տպագրված հոդվածների ու հաղորդումների ցուցակներ։ Գիտաշխատողները ամենօրյա ինֆորմացիա են ստանում միջազգային կյանքի և երկրի վիճակի մասին և այլն։ Այդ միջոցառումները մեծապես նպաստում են գիտական ուսումնասիրությունների որակի բարձրացմանը։

Հայ-հունգարական կապերը, երկու երկրների գիտական հիմնարկների գիտաշխատողների փոխայցելությունները, համատեղ գիտահետազոտական ուսումնասիրությունները կնպաստեն վեր հանելու հայ գաղթօջախների և հունգար ու հայ ժողովուրդների բարեկամության և համագործակցության վերաբերյալ մինչև այսօր անհայտ շատ հարցեր։

Այնուհետև իրենց տպավորությունները պատմեցին պատվիրակության անդամներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ե. Սարգսյանը և պատմական գիտությունների թեկնածու Վ. Ոսկանյանը։

— Հայ և հունգար գիտնականների փոխայցելությունները,— ասաց Ե. Սարգսյանը,— կնպաստեն ոչ միայն գիտական կապերի ամրապնդմանը, այլև պայմաններ կստեղծեն համատեղ գիտական հետազոտություններ կատարելուն, միմյանց մշակույթին ծանոթանալուն։ Հունգար գիտնականները մեզ առաջարկեցին համատեղ ժողովածու հրատարակել զարգացող երկրների պատմության և տնտեսության վերաբերյալ։ Նախատեսված ժողովածուի տնտեսական հարցերի մասին բաժինը պետք է գրեն հունգարացի գիտնականները, իսկ պատմության բաժինը՝ ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի գիտական աշխատողները։

Վ. Ոսկանյանը իր ելույթում նշեց, որ Հունգարիայի և Հայաստանի գիտական կապերը կօգնեն լուսաբանելու Հունգարիայի հայ գաղութների պատմության հարցերը։

Մեր բազմաթիվ հանդիպումների և զրույցների ժամանակ,— ասաց նա,— հունգարացի բարեկամները ընդգծում էին այն կարևոր միտքը, որ հայերին հովանավորելով, հունգար ժողովուրդը ոչ միայն նրանց օգնել է փրկվելու ֆիզիկական ոչնչացումից, այլև կանգնել իրենց շարքերում, օգտվել ինքնավարության իրավունքից, հաղորդակից լինել երկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման բարձր աստիճանի վրա գտնվող կյանքին, պայմաններ է ստեղծել նրանց ազգային կյանքի զարգացման համար։ Իսկ հայ արհեստավորները նրանց հաղորդել են իրենց ազգային արհեստագործական հմտությունները, հայ վաճառականները միջնորդներ են եղել Ասիայի և Եվրոպայի միջև զարգացող առևտրում։

Շնորհիվ ազգային ու կրոնական հանդուրժողականության և բարի դրացիական հարաբերությունների, հունգարահայերը հասարակության մեջ զբաղվում են պատվավոր տեղ տալով գրողներ, դիվանագետներ, հեղափոխականներ, զինվորականներ, նույնիսկ գեներալներ։ Հունգարիայի 1848—1849 թթ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխության և ազգային-ազատագրական շարժման աչքի ընկնող մի շարք հունգարացի գեներալների շարքում էին նաև հայազգի գեներալներ Լազար Վիլմոշը (Վիլհելմ Ղազարյան), Էոնես Քիշին (Քիշյան), իսկ երրորդ գեներալը՝ Յանոշ Յեցին (Հովհաննես Յիցյան) խուսափելով բանտարկությունից, տեղափոխվել է Բուենոս-Այրես և այնտեղ հիմնել ռազմական ակադեմիա։

Բաժանմունքի բյուրոյի նիստում քննարկվող հարցի շուրջը ելույթներ ունեցան ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Մ. Հասրաթյանը, ակադեմիկոսներ Ա. Ղարիբյանը, Ա. Կարինյանը, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Դ. Հովնանը։

— Այս հիանալի գործը,— ասաց Հասրաթյանը,— պետք է շարունակել նաև Բալկանյան այլ երկրներում։ Սակայն աններելի է, որ մենք այդ երկրների լեզուները չգիտենք, անհրաժեշտ է շուտափույթ կերպով կազմակերպել լեզուների ուսուցման գործը։ Մեր արխիվների մեծ մասը կորցրել ենք, պետք է մտածել դրանք գտնելու ու գիտական շրջանառության մեջ դնելու մասին։ Արխիվների զգալի մասը, հատկապես 1918—1920 թթ. արխիվները, գտնվում են Երուսաղեմում և մինչև օրս չեն բացված, մի այլ արխիվ՝ Հալեբում։ Անշուշտ, Հունգարիայում գտնվող արխիվները մեծ դեր կխաղան մեր ժողովրդի պատմության շատ հարցերի բացահայտման և լուսաբանման գործում։

Ակադեմիկոս Ա. Ղարիբյանը իր ելույթում բաժանմունքի բյուրոյի ուշադրությունը հրավիրեց փոխադարձ կապերի և ուսուցման միջոցով հունգարագետ հայ և հայագետ հունգար կադրերի պատրաստման վրա։ Նա նշեց, որ պետք է հունգարահայ երիտասարդներ հրավիրել մեր ուսումնական հաստատություններում սովորելու համար, իսկ հայ ասպիրանտների դործուղել Հունգարիա, այնտեղ սովորելու, նույնիսկ պաշտպանելու դիսերտացիա։

Հայ-հունգարական գիտական կապերի հետագա ամրապնդման վերաբերյալ բաժանմունքի բյուրոն ընդունեց հատուկ որոշում։